

KPMG

# Աուդիտորական ծառայությունների մատուցման գնանշման հարցման առաջարկ

## «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ կարիքների համար

25 հունվարի 2021թ.

Digitally signed by
MAKYAN LILIT
7004920135
Date: 2021.02.03
14:34:57 AMT

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 59 59 99
Ինտերնետ www.kpmg.am

«Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0010
Մելիք Ադամյան փողոց 1

25 հունվարի 2021թ.

Հարգելի գործընկերներ,

Պատիվ ունենք Ձեր ուշադրությանը ներկայացնել «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ-ի կարիքների համար (այսուհետ՝ Ընկերություն) 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի առաջարկը, որի համապատասխանությունը գնանշման հարցման հրավերի պահանջներին ներկայացված է հաջորդիվ:

Մենք լիովին մեր տրամադրության տակ ունենք բոլոր այն ռեսուրսները, որոնք թույլ կտան ապահովել ծառայությունների առավելագույն մասնագիտական մակարդակը սահմանված ժամկետներում: Ընկերության հետ աշխատող մասնագետների խմբում կներգրավվեն համապատասխան ոլորտի գիտելիքներ և զգալի աշխատանքային փորձ ունեցող «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատակիցները: Ես անձամբ հանդես կգամ որպես որակի վեհահսկողության մասով ղեկավար:

Մենք պատրաստ ենք տրամադրել մանրամասն մեկնաբանություններ և պահանջվող տեղեկատվություն մեր այս առաջարկի վերաբերյալ:

Հարգանքով՝

Տիգրան Գասպարյան
*Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն*

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

# Բովանդակություն


| **Անվանումը** | **էջ** |
|---|---|
| Տեղեկատվություն «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի վերաբերյալ<br>▪ Ընդհանուր տեղեկատվություն «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի վերաբերյալ<br>▪ Ճյուղային մասնագիտացումը և միջազգային փորձը | <br>4<br>4 |
| «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն Հայաստանում | 5 |
| Աշխատանքային փորձը<br>▪ Աուդիտորական ծառայությունների մատուցման փորձը Հայաստանում | <br>6 |
| Աուդիտի առարկան | 7 |
| Աուդիտի իրականացման նախնական ժամկետները | 7 |
| Հավելված 1 | 11 |
| Անկախություն | 13 |
| Հետադարձ կապ | 14 |
| Ծանուցում | 14 |


KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

# Տեղեկատվություն «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի վերաբերյալ

## Ընդհանուր տեղեկատվություն «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի վերաբերյալ

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն հանդիսանում է աուդիտորական ընկերությունների «Մեծ քառյակի» ներկայացուցիչ, աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ մատուցող մասնագիտական ընկերությունների համաշխարհային ցանց: 146 երկների «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի գրասենյակներում աշխատում է 227,000 աշխատակից: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի գրասենյակների հաջողությունը ապահովող հիմնական գործոններն են գործունեության նկատմամբ կիրառվող ողջամիտ մոտեցումը, կորպորատիվ արժեքների պահպանումը և մեր աշխատակիցները:

### Ճյուղային մասնագիտացումը և միջազգային փորձը

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն առաջինն էր խոշոր աուդիտորական ընկերություններից, որը սկսեց կառուցել իր գործունեությունը ճյուղային սկզբունքով: Նման կառուցվածքը թույլ է տալիս մեզ աշխատել՝ հիմնվելով հաճախորդի գործունեության վերաբերյալ ունեցած համապարփակ գիտելիքների վրա և մշակել արժեքավոր գործնական առաջարկություններ այն խնդիրների ուղղությամբ, որոնց բախվում են հաճախորդները:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքի ճյուղային սկզբունքը մեր հաճախորդների համար ապահովում է հետևյալ առավելությունները.

- համագործակցելու հնարավորություն բազմակի ուղղվածություն ունեցող աշխատանքային խմբերի հետ, որոնց անդամները համատեղ աշխատանքի մեծ փորձ ունեն,
- մատուցվող ծառայությունների ավելի բարձր արդյունավետություն՝ շնորհիվ փորձի ու գիտելիքների շարունակական փոխանակման և «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի առաջատար մեթոդաբանական մշակումներն օգտագործելու հնարավորության:

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

# «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն Հայաստանում

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն Հայաստանում իր գրասենյակը հիմնել է 1997թ-ին: Այն առաջինն էր «Մեծ քառյակի» աուդիտորական ընկերություններից, որը գրանցվեց Հայաստանում: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի աշխատակազմը տրամադրում է աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայությունների լայն ընտրանի:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ում գործում են երեք բաժիններ՝ Աուդիտորական ծառայությունների բաժին, Խորհրդատվական ծառայությունների բաժին և Հարկային և իրավաբանական ծառայությունների բաժին և աշխատում է 67 աշխատակից:

### *Աշխատակիցների որակավորումը*

- Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) անդամներ – 14 աշխատակից
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորված աուդիտորներ – 18 աշխատակից
- Ներքին աուդիտի ասոցիացայի կողմից (The Institute of Internal Audit) որակավորված ներքին աուդիտոր (CIA)
- Որակավորված Ֆինանսական Վերլուծաբան (CFA)

## Աուդիտորական ծառայությունների բաժին

Աուդիտորական ծառայությունների բաժնում աշխատում է 37 աշխատակից, այդ թվում՝ ղեկավար գործընկերը/աուդիտորական ծառայությունների բաժնի գործընկերը և երկու ավագ մենեջերը և երկու մենեջերը:

Բաժինն առաջարկում է հետևյալ ծառայությունները.

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) և Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ) համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ
- Խորհրդատվական ծառայություններ միջազգային հարթակներում կազմակերպության ցուցակման և եվրոպարտատոմսների թողարկման նախապատրաստվելու հետ կապված
- Ֆինանսական հաշվետվությունների դիտարկում
- Ֆինանսական հաշվետվությունների կոմպիլյացիա
- Համաձայնեցված ընթացակարգերի իրականացում

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:



# Աշխատանքային փորձը

## Աուդիտորական ծառայությունների մատուցման փորձը Հայաստանում

Ավելի քան 23 տարի «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ն աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ է մատուցում Հայաստանի շուկայում: Մեր հաճախորդներն են ենթակառուցվածքների և տրանսպորտի, ֆինանսական և սպառողական, հիմնադրամների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների, գազի, էներգետիկայի և բնական ռեսուրսների, մետալուրգիայի և հանքարդյունաբերության, տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության, հյուրանոցային ծառայությունների և լրատվամիջոցների ոլորտներում գործող ընկերությունները:

Բացի աուդիտի ոլորտում ունեցած փորձից, աշխատանքային խումբը հարուստ աշխատանքային փորձ ունի ***եվրոպական ֆոնդային բորսաներում պարտատոմսերի թողարկումը պլանավորող և հաջողությամբ իրականացնող ընկերությունների հետ***՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Վրաստանի «Նավթի և գազի կորպորացիա», «Վրաստանի երկաթուղիներ», «Սիլքնեթ»:

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

# Աուդիտի առարկան

Ստորև ներկայացված են աշխատանքի պահանջվող շրջանակները.

- Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն պատրաստված 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:

Աուդիտի իրականացման նախնական ժամկետներն են՝

| Ամսաթիվը | Աշխատանքը |
|---|---|
| Փետրվար 2021թ. | Աուդիտի իրականացման նախնական ծրագրի մշակում և նախապատրաստում աուդիտին |
| Փետրվար-մարտ 2021թ. | Տարեվերջի դրությամբ աուդիտորական ընթացակարգերի իրականացում |
| 30 մարտի 2021թ. | Աուդիտորական եզրակացության ներկայացում |
| 31 մարտի 2021թ. | Ղեկավարությանն ուղղված հաշվետվության ներկայացում՝ աուդիտի ընթացքում կատարած դիտարկումների հիման վրա |

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

# Հիմնական աշխատակազմը



| | **Տիգրան Գասպարյան** |
|---|---|
| **Պաշտոնը** | Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն |
| **Որակավորումը** | ▪ Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, տնտեսագիտության բակալավրի աստիճան<br>▪ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորված աուդիտոր |
| **Փորձը** | Տիգրանն աշխատում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ում 2002թ-ից: 2011թ. հոկտեմբերից նա հանդիսանում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի Աուդիտի բաժնի ղեկավար: 2014թ. հոկտեմբերից Տիգրանը զբաղեցնում է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի տնօրենի, Ղեկավար գործընկերոջ պաշտոնը:<br><br>Տիգրանն աշխատանքի հարուստ փորձ ունի ֆինանսական ծառայությունների, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, մանրածախ առևտրի և այլ ոլորտներում գործող հաճախորդների հետ:<br><br>Տիգրանը հարուստ աշխատանքային փորձ ունի եվրոպական ֆոնդային բորսաներում պարտատոմսերի թողարկումը պլանավորող և հաջողությամբ իրականացնող ընկերությունների հետ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, Վրաստանի «Նավթի և գազի կորպորացիա»-ում: |
| **Ֆինանսական ոլորտի հիմնական հաճախորդները** | **Բանկեր**<br>«Արդշինբանկ» ՓԲԸ, «Ազգային ժողովի աշխատակազմ», Վրաստանի «Նավթի և գազի կորպորացիա», «Ռենեսա» ՓԲԸ, Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ «Ինեկոբանկ» ՓԲԸ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ խումբ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ, «Համահայկական բանկ» ԲԲԸ, «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ, «Արարատ Բանկ» ԲԲԸ, «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ<br><br>**Վարկային և ապահովագրական ընկերություններ**<br><br>«Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ, «Առաջին Ֆակտորինգային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ, «Էքսպորտ Ֆայնենս» ՈւՎԿ ՓԲԸ, «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ, «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ, «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակեպություն ՓԲԸ, «Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ, «Կիլիկիա» ՈւՎԿ ՍՊԸ, «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ, «Ջի-Էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈւՎԿ ՍՊԸ, «Արեգակ» ՈւՎԿ ՓԲԸ, «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ, ԳՏՏՋ ԾԻԳ ՊՀ-ի «Գյուղական Ֆինանսավորման կառույց», «Ռենեսա» ՓԲԸ, «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ, «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ, «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) Լիմիթեդ» |

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերության՝ «KPMG International Limited»-ին:



| | Իրինա Գևորգյան |
|---|---|
| Պաշտոն | Գործընկեր, Աուդիտի բաժին, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ |
| Որակավորումը | ▪ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը<br>▪ Մադրիդի (Իսպանիա) «IE» կառավարման դպրոցը - Գործարար կառավարման մագիստրոսի աստիճան (MBA)<br>▪ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորված աուդիտոր<br>▪ Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի անդամ (FCCA) |
| Փորձը | Իրինան «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ում աշխատում է 2003թ-ից: 2010թ-ից մինչև 2013թ. սեպտմբերը նա հանդիսանում էր «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ի Աուդիտի բաժնի ավագ մենեջեր: 2013թ. հոկտեմբերից ստանձնել է Աուդիտի բաժնի տնօրենի պաշտոնը, իսկ 2017թ. հոկտեմբերից հանդիսանում է Աուդիտի բաժնի գործընկեր:<br><br>Ավելի քան տաս տարի աշխատելով «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ում՝ Իրինան աշխատանքի հարուստ փորձ ունի ֆինանսական (բանկային) ծառայությունների ոլորտում գործող հաճախորդների հետ: Նա նաև մեծ փորձառություն ունի հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, մանրածախ առևտրի և այլ ոլորտներում գործող հաճախորդների հետ:<br><br>Իրինան երկար ժամանակ աշխատել է «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի տարբեր գրասենյակներում, ներառյալ վեց ամիս «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի լոնդոնյան գրասենյակի ֆինանսական ծառայությունների բաժնում:<br><br>Իրիան հարուստ աշխատանքային փորձ ունի եվրոպական ֆոնդային բորսաներում պարտատոմսերի թողարկումը պլանավորող և հաջողությամբ իրականացնող ընկերությունների հետ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Վրաստանի «Նավթի և գազի կորպորացիա», «Վրաստանի երկաթուղիներ», «Սիլքնեթ» ընկերություններում: |
| Ֆինանսական ոլորտի հիմնական հաճախորդները | **Ներդրումային ֆոնդեր**<br>«Georgian Co-Inveestment Fund» (Վրաստան), «Փարթնըրշիփ ֆանդ» (Վրաստան)<br><br>**Բանկեր**<br>«Արդշինբանկ» ՓԲԸ, «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Համահայկական  բանկ» ԲԲԸ, «Կասկադ Բանկ» ՓԲԸ<br><br>**Վարկային և ապահովագրական ընկերություններ**<br>«Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ, «Արմենիա Ինշուրանս« ԱՍՊԸ, «Լիբերթի Բանկ» ԲԲԸ (Վրաստան), «ԱյԷնՋի Լիզ» (ՄԹ), «Սինգրս & Ֆրայդլենդրս Գրուպը» (ՄԹ) և այլ կազմակերպություններ |

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերության՝ «KPMG International Limited»-ին:



| | **Արաիկ Ծատուրյան** |
|---|---|
| **Պաշտոնը** | Մենեջեր, Աուդիտի բաժին, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ |
| **Որակավորումը** | ▪ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, մարքետինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ<br>▪ Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի (ACCA) անդամ<br>▪ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորված աուդիտոր<br>▪ Ներքին աուդիտորների ինստիտուտ, որակավորված ներքին աուդիտոր(CIA) |
| **Փորձը** | 2018թ. դեկտեմբերից Արաիկը ստանձնել է աուդիտի բաժնի մենեջերի պաշտոնը: 2015-2018թթ. նա աշխատել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ում որպես ավագ աուդիտոր:<br><br>Արաիկը աշխատանքի հարուստ փորձ ունի ֆինանսական, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, մանրածախ առևտրի և այլ ոլորտներում գործող հաճախորդների հետ:<br><br>Արաիկը աշխատանքային փորձ ունի եվրոպական ֆոնդային բորսաներում պարտատոմսերի թողարկումը պլանավորող և հաջողությամբ իրականացնող ընկերությունների հետ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ում: |
| **Ֆինանսական ոլորտի հիմնական հաճախորդները** | **Բանկեր**<br>«Արդշինբանկ» ՓԲԸ,  «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, «ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ, Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ, «Համահայկական  բանկ» ԲԲԸ<br><br>**Վարկային և ապահովագրական ընկերություններ**<br>Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ, «Վարկս Էյ Էմ» ՈւՎԿ ՓԲԸ, «Կամուրջ» ՈւՎԿ ՓԲԸ, «Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ |

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

**Հավելված N 1**
*ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/6* **ծածկագրով**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի**

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ մասնակցելու*

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ ՓԲԸ-ի կողմից ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/6 ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ N1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

Հայաստանի Հանրեպետության ռեզիդենտ:
երկրի անվանումը

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02529689.
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ general@kpmg.co.am.
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ Վ. Սարգսյան փողոց 26/1, «Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն».
  գործունեության հասցեն

հեռախոսահամարն է՝ 010 595 999
հեռախոսի համարը

Սույնով «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) բավարարում է ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/6 ծածկագրով ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.

2) ՀՊՀՖ-ԳՀԾՁԲ-21/6 ծածկագրով ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆն մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ին
  մասնակցի անվանումը

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին:

փոխկապակցված անձանց և (կամ) «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| Օլեգ Նիկոլայի Գոշչանսկի | | անձնագիր՝ FS474098, տրված 07.09.2018թ., No. 8079-ի կողմից |
| Անտոն Իվանի Ուսով | | անձնագիր՝ 53 1382124, տրված Ռուսաստանի ԱԳՆ 07701-ի կողմից 11.10.2017թ.-ին |

Տիգրան Գասպարյան

*Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն*

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» «KPMG ARMENIA» 02529689

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերության՝ «KPMG International Limited»-ին:



# Անկախություն

## Անկախության ապահովում

Անկախության ապահովումը հանդիսանում է մեր ծառայությունների մատուցման պարտադիր պայմանը: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի համբավը մեծ մասամբ ձևավորվում է ընկերության մասնագետների վարքագծի ու անկողմնակալ և անկախ առաջարկություններ ու եզրակացություններ տրամադրելու մեր կարողության հիման վրա:

Մենք կօգտագործենք անկախությունը վերահսկող մեր համաշխարհային համակարգը, ինչը թույլ կտա խուսափել մեր աուդիտորների անկախության հետ կապված որևէ հարցերի առաջացումից: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ում գործող անկախությունն ապահովող համակարգը պահանջում է բոլոր գործընկերներից և աշխատակիցներից տարեկան կտրվածքով հաստատել էթիկայի նորմերին ու անկախության սկզբունքներին հետևելու փաստը, որոնք մասնավորապես արգելում են մասնակցությունն աուդիտի հաճախորդների բաժնետիրական կապիտալում:

Ներկայումս մենք Ընկերության հետ չունենք այնպիսի հարաբերություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ մեր անկախության վրա:

Մենք կխուսափենք այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են վտանգի ենթարկել մեր անկախությունը՝ նախապես ձեռք բերելով Ընկերության համաձայնությունը լրացուցիչ ծառայությունների մատուցման վերաբերյալ հարցումներ ստանալիս:

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլական ընկերության՝ «KPMG International Limited»-ին:

## Հետադարձ կապ

**Տիգրան Գասպարյան**
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն
Հեռ. + [37410] 59 59 99
tgasparyan@kpmg.com

**Իրինա Գևորգյան**
Գործընկեր, Աուդիտի բաժին
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հեռ. + [37410] 59 59 99
igevorgyan@kpmg.com

**www.kpmg.am**

Սույն առաջարկը պատրաստվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի կողմից, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն է և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Սույն առաջարկում նշված ծառայությունների մատուցումը բոլոր առումներով ենթակա է համապատասխան պայմանագրի բանակցման, համաձայնեցման և ստորագրման: «KPMG International»-ը և վերջինիս հետ կապակցված կազմակերպությունները ծառայություններ չեն մատուցում հաճախորդներին: Որևէ անդամ ընկերություն իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել «KPMG International»-ին, վերջինիս հետ կապակցված կազմակերպություններին կամ ցանկացած այլ անդամ ընկերության պարտականություններ հանձն առնել երրորդ անձանց հանդեպ: «KPMG International»-ը կամ վերջինիս հետ կապակցված կազմակերպություններն իրենց հերթին իրավասու չեն պարտադրել կամ պարտավորեցնել ցանկացած այլ անդամ ընկերության հանձն առնել նման պարտականություններ: Սույն չպարտավորեցնող առաջարկում նշված ծառայությունների մատուցումը բոլոր առումներով ենթակա է ծառայությունների շրջանակը ներառող համապատասխան պայմանագրի բանակցման, համաձայնեցման և ստորագրման, ինչպես նաև հաճախորդի և աշխատանքի ընդունման համար նախատեսված «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի կիրառելի ընթացակարգերի, այդ թվում՝ անկախության և շահերի բախման հետ կապված ստուգումների իրականացման և, կիրառելի լինելու դեպքում, աուդիտի կոմիտեի կողմից հաստատման: Սույն առաջարկում ներառված անձնական տվյալները ենթակա են մշակման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

KPMG

© 2021 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին: